ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՌԱՀ-ԳՀԱՊՁԲ-17/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **04.07.2017թ.**
Ժամը 11:00

«ՀՌԱՀ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին.

1. ***Հայտերի գնահատման արդյունքները՝ հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.***

«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» և «ՖԼԵՇ» ՍՊ ընկերությունների կողմից գնանշման հարցման գնման ընթացակարգին ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին և գնահատվում են բավարար:

«Մաքսիուր» ՍՊ ընկերության կազմած հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին՝ բացակայում է մասնակցի հայտի ապահովման չափը և էլեկտրոնային ստորագրությունը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, «Մաքսիուր» ՍՊ ընկերության հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. ***Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ներկայացվող պահանջները.***

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «ՖԼԵՇ» ՍՊ ընկերությունը, հանձնաժողովին է ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշների համապատասխանությանը հիմնավորող, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. ***Ներկայացված փաստաթղթերի համապատասխանության գնահատումը, գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը.***

Հանձնաժողովը բավարար է գնահատել 2-րդ կետի համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. ***«ՀՌԱՀ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հրապարակում.***

Հանձնաժողովը որոշեց՝ ընտրված մասնակից ճանաչել «ՖԼԵՇ» ՍՊ ընկերությանը և պայմանագիր կնքելու նպատակով առաջարկել ծանուցվելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու է սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ (ԳՊ/ԳԱՊ)

ՀՌԱՀ աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ — **Մ. Խաչատրյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ (ԳՊ/ՄՀՄ)

ՀՌԱՀ աշխատակազմի գործերի կառավարչության գլխավոր մասնագետ, գնումները համակարգող — **Ա. Մատինյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԳԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի ծրագրերի մոնիտորինգի բաժնի պետ — **Լ. Մովսեսյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԳԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի միջ. կապերի, տեղեկատվության և զարգացացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ — **Գ. Դարբինյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԲԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի քարտուղարության առաջատար մասնագետ — **Ն. Կարապետյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԲԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ — **Է. Գրիգորյան**